Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան_____

«02» 07 2025թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**

- Սերգեյ Աղինյան,
- Սեդա Շահինյան,
- Գարիկ Չիլինգարյան,
- Աշոտ Ուլիխանյան,
- Սևակ Բաբայան,
- Դավիթ Մուրադյան,
- Զարուհի Ստեփանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի նախագահի խորհրդական,
- սակագնային քաղաքականության վարչության պետ,
- սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ,

- ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի հունիսի 26-27-ը, Վրաստանի քաղաք Թբիլիսի:

4. Հրավիրող կողմը՝ Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողով (GNERC):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի (GNERC) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև համագործակցության խորացման և հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում փորձի փոխանակման նպատակով կազմակերպվող երկկողմ հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները՝ Երկկողմ հանդիպման շրջանակում քննարկվել են մի շարք թեմաներ: Մասնավորապես՝ հանձնաժողովի և GNERC ներկայացուցիչները ներկայացրել են Հայաստանում և Վրաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականցմանը, միկրոգեներացիային և ինքնավար էներգաարտադրությանը, էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին և անդրսահմանային առևտրին, սակագնային կարգավորմանը, կարգավորման աուդիտին, կարգավորվող ծառայությունների որակին, անդրսահմանային էներգետիկ ենթակառուցվածքների օրենսդրությանը, հանրային ծառայությունների գրասենյակի #303 ծառայության համարին, կարգավորողների անկախության ամրապնդմանը և հաղորդակցման ռազմավարությանը վերաբերող մի շարք հարցեր:

Վրաստանի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը խոսեց Վրաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման բարեփոխումների մասին: Ներկայացվեցին Վրաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումները՝ ընդգծելով մրցակցության կարևորությունը սոցիալական բարեկեցության բարձրացման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափանցիկ գնագոյացման և շուկայական ռիսկերի բաշխման համար: Ուրվագծվեցին Վրաստանի շուկայի բարեփոխումների կարևորագույն փուլերը և մանրամասն ներկայացվեցին անցումային և նպատակային շուկայի մոդելները: Իրականացվել են հետևյալ քայլերը՝ ԵՄ օրենսդրության ներդրում, որի նպատակն է զարգացնել շուկայի մրցակցությունը, սպառողներին տալ ազատ ընտրության

իրավունք և պաշտպանել նրանց շահերը: Շուկայի ազատականացման բարեփոխումները սկսել են 2019 թվականից, երբ ընդունվել է «Էլեկտրաէներգետիկայի և ջրամատակարարման մասին» օրենքը և ստեղծվել է Վրաստանի էներգետիկ բորսան (Georgian Energy Exchange): Այնուհետև հաստատվել է էլեկտրաէներգետիկական շուկայի հայեցակարգը և լիցենզիաներ են տրամադրվել շուկայի օպերատորներին (GENEX և GSE), որից հետո 2021-2023 թվականներին իրականացվել են շուկայի նոր մոդելի սիմուլյացիաները, իսկ 2024 թվականին սկսվել է անցումային շուկայի մոդելի նախապատրաստումը: Անցումային մոդելի շրջանակում կնքվել են երկկողմ պայմանագրեր և սկսել է իրականացվել էլեկտրաէներգիայի հավասարակշռման առևտուր՝ ամսական հիմունքներով և գործարկվել է օր-առաջ շուկան: 2024 թվականի հուլիսի 1-ից շուկան ազատականացվել է: Ներկայացվեցին նպատակային մոդելի ակնկալիքները և օր-առաջ շուկայի արդյունքները:

Հանձնաժողովի ներկայացուցիչը այս համատեքստում ներկայացրեց Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի առանձնահատկությունները: Ներկայացվեց Հայաստանում էլեկտրական էներգիայի արտադրության կառուցվածքը և մինչև շուկայի ազատականացված մոդելին անցնելը՝ 2022 թվական փետրվարի 1-ը, գործող մոդելը: Ներկայացվեցին բարեփոխումների նպատակները՝ շուկայում առևտրի ճկուն մեխանիզմների ստեղծման միջոցով ապահովել էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի փուլային ազատականացում, ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում մրցակցության բարձրացում, էլեկտրաէներգետիակական մեծածախ շուկայի գործունեության համար թափանցիկության և մրցակցության ապահովում, աջակցել միջպետական առևտրին: Շուկայի ազատականացման բարեփոխումները սկսվել են 2017-2018 թվականներին, երբ իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, այնուհետև 2019-2020 թվականներին իրականցվել է ենթաօրենսդրական ակտերի մշակումը, 2019-2021 թվականներին իրականացվել է համապատասխան մասնագետների ուսուցում և նախապատրաստում, 2022 թվականին սկսվել է անցումային շրջանը, իսկ 2023 թվականից ազատականացված շուկան սկսել է զարգանալ:

Ներկայացվեց Վրաստանի փորձը ինքնավար էներգաարտադրության մասով՝ 2016-2024 թվականների ընթացքում միկրո կայանների զարգացման դինամիկան: 2016 թվականին գործել են հետևյալ սահմանափակումները՝

- առավելագույն հզորությունը կազմել է 100կՎտ,

- վիրտուալ կապով կայաններ չեն թույլատրվել:

2016 թվականին գործել է 28 միկրո կայան:

2024 թվականին, երբ առավելագույն հզորությունը եղել է 500կՎտ, իսկ վիրտուալ կապը կայանների միջև արդեն թույլատրվել է, միկրո կայանների թիվը կազմել է 2138, ընդհանուր 231 186կՎտ հզորությամբ:

2025 թվականին 2024 թվականի նկատմամբ ինքնավար կայանների թիվը աճել է շուրջ 20%-ով:

Ինքնավար էներգաարտադրության առավելություններն են՝

- խթանում է մաքուր էներգիան,
- նվազեցնում է ածխածնային արտանետումները,
- սպառողները ավելի ցածր վճարներ են վճարում սպառած էներգիայի համար,
- արևային կայաններում իրականացված առաջնային ներդրումների վերադարձ:

Ինքնավար էներգաարտադրության խնդիրներն են՝

- ցանցի գերծանրաբեռնվածություն,
- վիրտուալ արտադրության սխեմաների խթանում:

Նշվեց, որ նախատեսվում է net-metering սխեմայից անցում կատարել net-billing սխեմայի, որը կիրականցվի 2027 թվականի հունվարի 1-ից: Այն սպառողները, որոնք գրանցված են net-metering սխեմայում կարող են այն օգտագործել մինչև 2033 թվականը:

Հանձնաժողովի ներկայացուցիչն իր հերթին, ներկայացրեց ինքնավար էներգաարտադրության մեկնարկի նախապատմությունը և գործընթացի զարգացման փուլերը Հայաստանում: Մասնավորապես, վրաց գործընկերներին համառոտ ներկայացվեցին՝

- Հայաստանում ինքնավար էներգաարտադրության գործընթացի ներդրմանը խոչընդոտած՝ հարկային օրենսդրության մեջ ժամանակին առկա խնդիրները, որոնց պատճառով մինչև 2016 թվականը հնարավոր չի եղել Հայաստանում իրականացնել ինքնավար էներգաարտադրություն:
- Հանձնաժողովի և էներգետիկայի բնագավառում պետական լիազոր մարմնի գործուն ջանքերով մշակված օրենսդրական մեծածավալ փաթեթի մասին, որի արդյունքում «Էներգետիկայի մասին» օրենքում սահմանվել է ինքնավար

էներգաարտադրության ինստիտուտը և դրա իրականացման կարգն ու հաշվարկները, իսկ հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում բացառվել է ինքնավար էներգաարտադրության ընթացքում կրկնակի հարկման հնարավորությունը:

- ինքնավար էներգաարտադրության գործընթացի էությունը, հիմնական առավելությունները, ինքնավար կայանների առավելագույն դրվածքային հզորության սահմանափակումները, փոխհաշվարկները և հատուցման կարգը:
- ինքնավար էներգաարտադրության շրջանակում 2022 թվականի մայիսի 1-ից իրականացված բարեփոխումները, որոնց արդյունքում ինքնավար էներգաարտադրողներին հնարավորություն է տրվել ստեղծել ինքնավար խումբ, ինչպես նաև էլեկտրական էներգիան արտադրել և սպառել իրենց միացման տարբեր կետերում:
- ինքնավար խմբերում արտադրված էլեկտրական էներգիայի՝ խմբի անդամների միջև բաշխման մեթոդները և դրանցից յուրաքանչյուրի մասով առանձնահատկությունները:
- ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան 2016-2024 թվականների, ինչպես նաև 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ: Այս համատեքստում նշվեց, որ եթե ոլորտի զարգացման մեկնարկային ժամանակահատվածում՝ 2016 թվականի ավարտին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ էլեկտրական էներգիայի փոխհոսքեր են իրականացրել 16 ինքնավար էներգաարտադրողներ՝ էլեկտրակայանների 0.2 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ, ապա 2024 թվականի ավարտին ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 31249՝ էլեկտրակայանների 420.5 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, իսկ ահա 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 39345, որոնց էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմել է մոտ 508 ՄՎտ: Նշվել է, որ սրանք վերականգնվող էներգետիկայի աճը բնութագրող շոշափելի ցուցանիշներ են, որոնք խոսում են Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ անկախության մակարդակի բարձրացման մասին:

Վրաց գործընկերներին ներկայացվեց նաև, որ Հայաստանում ևս մշակվում է օրենսդրական նախաձեռնություն՝ net-metering սխեմայից net-billing սխեմային անցում կատարելու ուղղությամբ: Թեմայի շրջանակում քննարկվեցին նաև արևային էներգաարտադրության և ինքնավար էներգաարտադրության շարունակական զարգացման պարագայում էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող խնդիրների, այդ թվում՝ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների արդյունավետ կարգավարման դժվարացման մասով:

Էլեկտրաէներգիայի հաղորդման և անդրսահմանային առևտրի թեմայի մասով Վրաստանի կողմից ներկայացվեց 2025 թվականի Վրաստանի 10 տարվա ցանցի զարգացման ծրագիրը, Վրաստանի էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ընդհանուր նկարագիրը՝ ներառյալ ցանցի բնութագրերը, ընդհանուր երկարությունը (6498 կմ): Նշվեց, որ երկրի ընդհանուր հզորությունը՝ 4671 ՄՎտ է: Վրաստանը անդրսահմանային առևտուր է իրականացրել հարևան չորս երկրների հետ՝ Ռուսաստան (400ՄՎտ առք և վաճառք), Ադրբեջան (1700ՄՎտ առք և վաճառք), Հայաստան (150ՄՎտ առք և վաճառք) և Թուրքիա (850ՄՎտ առք և վաճառք): 2034 թվականի նախատեսվում է, որ այդ ցուցանիշները կկազմեն՝ Ռուսաստան՝ 1600ՄՎտ առք և վաճառք, Ադրբեջան՝ 2000ՄՎտ առք և վաճառք, Հայաստան՝ 700ՄՎտ առք և վաճառք, Թուրքիա՝ 1300ՄՎտ առք և վաճառք և Սև ծովում՝ 1300ՄՎտ: Անդրադարձ կատարվեց նաև Մարնեուլի-Այրում՝ 500Կվտ բարձր հաճախականության հաստատուն էլեկտրաէներգիայի՝ 700 ՄՎտ հաղորդման հզորությամբ գծի նախագծի կարևորությանը:

Հանձնաժողովի կողմից նույն թեմայի շրջանակում ներկայացվեցին Բարձրավոլտ էլեկտրական ցանցերի գործունեությանը, շահագործմանը և սպասարկմանը վերաբերող մի շարք հարցեր: Ներկայացվեցին Հայաստանում ներկայումս ընթացող անդրսահմանային գծերի կառուցման երկու ծրագրերը՝ Հայաստան-Վրաստան (700 ՄՎտ հզրությամբ) և Հայաստան-Իրան (400կՎ լարմամբ, 1200 ՄՎտ հզորությամբ) և դրանց նպատակները: Ներկայացվեցին նաև ՀՀ ներկրվող և ՀՀ-ից արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալները:

Սակագնային կարգավորման ընդհանուր սկզբունքները թեմայի շրջանակում GNERC-ի ներկայացուցիչը նշեց, որ կարգավորվում և սահմանվում են Վրաստանի էլեկտրաէներգիայի, գազի, խմելու և ոռոգման ջրի սակագները: Ընդ որում՝ մատակարարման սակագները սահմանելիս օգտագործվում է ծախսերի վրա հիմնված

մոդելը, իսկ ցանցային սակագները սահմանելիս օգտագործվում է հիբրիդային մոդելը՝ ծախսերի վրա հիմնված (CAPEX) և խթանող (Con.OPEX) մոտեցումները: Մանրամասն նկարագրվեցին էլեկտրաէներգիայի ցանցի, գազի ցանցի և ջրամատակարարման սակագների տարբեր կարգավորման ժամանակահատվածները՝ 5 տարի էլեկտրաէներգիայի և գազի համար և 3 տարի՝ ջրամատակարարման համար: Կարգավորման նշված շրջանակը նպատակ ունի ապահովել ծախսերը արտացոլող և թափանցիկ գնագոյացում: Ներկայացվեց նաև ներդրումների վերադարձելիության մակարդակը՝ կապիտալի միջին կշռված արժեքի հաշվարկման բանաձևը:

Հանձնաժողովի կողմից ներկայացվեց սակագնային կարգավորման հիմնական մոտեցումները և նշվեց, որ մինչև 2022 թվականը էներգետիկայի բնագավառի սակագնային կարգավորումը հիմնված էր բացառապես ծախսերի վրա հիմնված մոդելի վրա, իսկ 2022 թվականի փետրվարի 1-ից սկսվել է աստիճանական անցում շուկայական մեխանիզմներին, մինչդեռ զուգահեռաբար շարունակում է կիրառվել ծախսերի վրա հիմնված մոդելը: Ներկայացվեցին նաև այն գործունեության տեսակները, որոնք ենթակա են սակագնային կարգավորման՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություններ, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայություններ, էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություններ, համակարգային ծառայությունների մատուցում, էլեկտրաէներգիայի բաշխման ծառայություններ, երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքը: Սակագնային կարգավորման ենթակա չեն՝ թրեյդեների գործունեությունը, որակավորված սպառողների կողմից էլեկտրական էներգիայի առքուվաճառքը, էլեկտրաէներգիայի ներկրումը և արտահանումը և մատակարարների կողմից սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքը (բացառությամբ երաշխավորված մատակարարի կողմից):

GNERC-ի կողմից ներկայացվեց կարգավորող աուդիտի դերը սակագնային կարգավորման մեջ: Քննարկվեցին կարգավորող ծախսերի աուդիտների նպատակները և սկզբունքները, որոնք ապահովում են լիցենզավորված ձեռնարկությունների ծախսերը, ողջամտությունը և կարգավորվող գործունեության զարգացումը: Աուդիտների իրավական հիմքը ամրագրված է «Էներգիայի և ջրամատակարարման մասին» Վրաստանի օրենքում և GNERC-ի կողմից հաստատված սակագնային մեթոդաբանություններում: Աուդիտի գործընթացի հիմնական նպատակն է թափանցիկության ապահովումը, որը նպաստում է,

որ կարգավորվող ծախսերի բազայում արտացոլվեն միայն հիմնավորված ծախսերը, որոնք, ազդում են սակագների հաշվարկների վրա:

GNERC-ի ներկայացուցիչը խոսեց ծառայության որակի կարգավորման վերաբերյալ: Մանրամասն ներկայացրեց GNERC-ի համապարփակ մոտեցումը ծառայությունների որակի կարգավորման հարցում, որը ներառում է մատակարարման անընդհատությունը, տեխնիկական որակը և առևտրային որակը: Ուրվագծվեց իրավական շրջանակը՝ ներառյալ «Էներգիայի և ջրամատակարարման մասին Վրաստանի» օրենքը և մի շարք ենթաօրենսդրական ակտեր, և քննարկվեցին ծառայությունների որակի ստանդարտները՝ ընդհանուր և երաշխավորված, որոնք սահմանում են փոխհատուցում ծառայության որակի խախտումների համար: Անդրադարձ կատարվեց նաև ծառայությունների որակի մոնիթորինգի համակարգին, որն օգտագործում է ընկերության տվյալների բազաների հետ ինտեգրված էլեկտրոնային մատյան՝ իրական ժամանակում մոնիթորինգի և փոխհատուցման ավտոմատացված հաշվարկների համար: Ծառայությունների որակի մոնիթորինգի համակարգը ներառում է տվյալներ տրամադրողներին, որոնք այն ընկերություններն են, որոնք գրանցում են սպառողների բողոքները, տվյալների հավաքագրումը, որը իրականացվում է GNERC-ի կողմից, տվյալների բազան, որը ապահովվում է Oracle համակարգը և տվյալների մշակումը և վերլուծությունը, որը իրականացվում է Qlik sense ծրագրի միջոցով: Ներկայացվեցին նաև մատակարարման շարունակականության հաշվարկման բանաձևերը: Ներկայացվեց նաև GNERC-ի կառուցվածքը՝ անդրադարձ կատարելով սպառողների դիմում բողոքներ քննող կառուցվածքային ստորաբաժանմանը: Մասնավորապես, նշվեց որ դրանով զբաղվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում, և սպառողների դիմումները չեն բաշխվում մասնագիտացված ստորաբաժանումների միջև՝ խաթարելով նրանց ամենօրյա բնականոն աշխատանքը:

Հանձնաժողովի ներկայացուցիչը ներկայացրեց ծառայությունների որակի կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, ներկայացվեցին իրավական հիմքերը, ծառայությունների որակին առաջադրվող պայմանները և դրանց մոնիթորինգ իրականացնելու հանձնաժողովի գործիքակազմը: Առանձին ուշադրություն հրավիրվեց սպառողներին տույժերի վճարման «ավտոմատացված» համակարգին և վերջին երկու տարիներին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին որպես կանխավճար փոխանցված գումարներին: Անդրադարձ կատարվեց հանձնաժողով

ներկայացված դիմում բողոքների քանակին, թեմաներին և դրանց հետագա ընթացքին: Այնուհետև, ներկայացվեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 2018-2034 թվականների ներդրումային ծրագիրը, որը նպատակուղղված է սպասարկման որակի բարելավմանը: Նշվեցին դրա կատարման հիմնական ուղղությունները, մինչ օրս իրականացված ծավալները և ապագա տարիները կանխատեսումը: Ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մաս են կազմում նաև կատարողական ցուցանիշները (KPI)՝ սպասարկման որակի ցուցանիշների բարելավման մասով:

GNERC-ի ներկայացուցիչը խոսեց սահմանային էներգետիկ ենթակառուցվածքների նախագծերի մասին օրենքի՝ TEN-E կարգավորման վերաբերյալ: Մասնավորապես, խոսվեց Վրաստանի TEN-E կարգավորման շրջանակներում սահմանային էներգետիկ ենթակառուցվածքների նախագծերի (PECI/PMI) իրավական շրջանակի մասին, որի նպատակն է պարզեցնել թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը և խթանել ներդրումները: Օրենքը տրամադրում է այնպիսի առավելություններ, ինչպիսիք են արագացված պլանավորումը, «մեկ կանգառի/պատուհանի» մոտեցումը, վարչական ծախսերի կրճատումը և թափանցիկության բարձրացումը, որոնք կարևոր են Վրաստանի էներգետիկ անվտանգության և «Էներգետիկ համայնքի» ու ԵՄ-ի հետ ինտեգրման համար: Այս կարգավորումն աջակցում է վերականգնվող էներգիայի ինտեգրմանը և համապատասխանում է կլիմայական նպատակներին:

GNERC-ի ներկայացուցիչը ներկայացրեց GNERC-ի կողմից թվային ծառայությունների մշակումը USSD/303# և Վրաստանի արդարադատության նախարարության ներքո գործող հանրային ծառայությունների գրասենյակը: Ընդգծվեց GNERC-ի կողմից USSD/*303# ծառայության ներդրումը, որը թույլ է տալիս քաղաքացիներին տեղեկացնել հանրային ծառայությունների մատուցման որակի մասին բջջային հեռախոսների միջոցով՝ առանց ինտերնետի կամ հատուկ հավելվածների հասանելիության: Այս անվճար, համազգային ծառայությունը թույլ է տալիս օգտատերերին ոչ միայն հաղորդել մատակարարման խնդիրների մասին, այլ նաև պահանջել հաշիվների ստուգում և ստուգել հաշվեկշիռը՝ զգալիորեն պարզեցնելով սպառող-հանրային ծառայություններ մատակարարող ընկերությունների փոխգործակցությունը և բարելավել վեճերի լուծման գործընթացը: Հիմնական պահանջն այն է, որ հաղորդումը ներկայացնող հեռախոսահամարը պետք է գրանցված լինի ծառայությունը մատուցող ընկերության գրանցամատյանում՝ որպես սպառողի հեռախոսահամար:

Խոսվեց նաև Վրաստանի ազգային կարգավորող մարմնի անկախության վերաբերյալ և ընդգծվեց Ազգային կարգավորող մարմինների անկախության կարևորությունը ներքին էներգետիկ շուկայի կարգավորման համար: Անկախությունը թույլ է տալիս կարգավորող մարմիններին սահմանել արդար սակագներ, ապահովել ծառայությունների որակը, կանխել մենաշնորհները և պաշտպանել սպառողների շահերը: Այն նաև խթանում է ներդրողների վստահությունը՝ ապահովելով երկարաժամկետ քաղաքականության հետևողականություն և նվազեցնելով քաղաքական միջամտությունը սակագների սահմանման և լիցենզավորման գործընթացում: Ներկայացվեցին նաև GNERC-ի ֆինանսավորման աղբյուրները, բյուջեն ծախսելու իրավասությունը, ուղղությունները, անդամների նշանակման և աշխատակիցների վարձատրության առանձնահատկությունների:

Այս համատեքստում հանձնաժողովի կողմից նույնպես ներկայացվեց հանձնաժողովի անկախությունը կարգավորող օրենսդրական շրջանակը, հանձնաժողովի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, ֆինանսավորումը, անդամների նշանակման և աշխատակիցների ընտրության առանձնահատկությունները, ինչպես նաև բյուջեի ձևավորման և համաձայնեցման գործընթացը:

Ներկայացվեց նաև GNERC-ի ուսումնական կենտրոնը՝ «Էլիզբար Էրիստավիի էներգետիկ ուսումնական կենտրոնը»: Կենտրոնը, որը լիազորվել է Վրաստանի «Էներգետիկայի և ջրամատակարարման մասին» օրենքում կատարված փոփոխություններով, խթանում է կրթությունը էլեկտրաէներգիայի, բնական գազի և ջրամատակարարման ոլորտներում: Այն նպաստում է գիտելիքների փոխանակմանը, պատրաստում է գիտական և կրթական նախագծեր, կազմակերպում է էլեկտրոնային գրադարան և թեմատիկ կոնֆերանսներ և գիտական ֆորումներ: Կենտրոնը նաև բարձրացնում է հանրային իրազեկվածությունը, անցկացնում է մասնագիտական զարգացման դասընթացներ GNERC-ի աշխատակիցների համար և առաջարկում է վճարովի վերապատրաստումներ կարգավորվող կազմակերպությունների աշխատակիցների համար: Բացի այդ, կենտրոնը անցկացնում է տարբեր դասընթացներ դպրոցականների, ուսանողների և երիտասարդների համար, որոնց շրջանակներում կազմակերպում է ճանաչողական շրջագայություններ ավագ դպրոցի աշակերտների համար էներգետիկայի և այլ կարգավորվող օբյեկտներ՝ ապագա մասնագիտություն ընտրելու հարցում ոգեշնչելու և օգնելու համար:

Հանձնաժողովի կողմից ներկայացվեց նաև զանգվածային լրատվական միջոցների և հանրության հետ հաղորդակցման ուղիները և ներկայումս մշակման փուլում գտնվող ռազմավարությունը, որը կօգնի առավել արդյունավետ և ճշգրիտ հաղորդակցմանը:

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպման ընթացքում քննարկված նյութերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://drive.google.com/drive/u/0/folders/1A5wxn_Axe5YUWniiL6AqYz2W6S_fbml8:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ընթացքում կայացած արդյունավետ քննարկումները և ձեռք բերված պայմանավորվածությունները հաշվի առնելով՝ առաջարկում ենք շարունակել պարբերական հանդիպումները GNERC-ի հետ, ինչը հնարավորություն կտա փոխանակել էներգետիկայի և ջրամատակարարման բնագավառների լավագույն փորձը և կխթանի տարածաշջանակային էներգետիկ շուկայի ձևավորմանը:

Միաժամանակ, առաջարկում ենք առավել մանրամասն ուսումնասիրել GNERC-ի փորձը USSD/*303# ծառայության ներդրման, դիմում-բողոքների քննարկման, GNERC-ի ուսումնական կենտրոնի և անկախության ամրապնդման մասով, հետագայում այն՝ նպատակահարմարության պարագայում, Հայաստանում ներդրնելու նպատակով:

Գործուղվող ---------- 02.07.25թ. **Ս.Աղինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.25թ. **Ս.Շահինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.2025թ. **Գ.Չիլինգարյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.2025 **Ա.Ուլիխանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.2025 **Ս.Բաբայան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.25թ. **Դ.Մուրադյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 02.07.25թ. **Հ.Սրեփանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 461-Հ,11.06.2025թ**

<< ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Մեսրոպյան,
հանձնաժողովի անդամ՝ Սեդա Շահինյան,
հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աղինյան,
հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ Գարիկ Չիլինգարյան,
հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ՝ Աշոտ Ուլիխանյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Թբիլիսի /Վրաստան /

5. Գործուղման ժամկետները **25.06.2025-28.06.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*<< կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մեսրոպ Մեսրոպյան	Սեդա Շահինյան	Սերգեյ Աղինյան	Գարիկ Չիլինգարյան	Աշոտ Ուլիխանյան	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)						-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)						-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	62.456	62.456	62.456	62.456	62.456	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	24,013	24,013	24,013	24,013	24,013	
	Օրերի քանակը	3	3	3	3	3	
	Ընդամենը (դրամ) հաշիվ հյուրանոցից	72,038	72,038	72,038	72,038	72,038	360.190
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	74	74	74	74	74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,378	28,378	28,378	28,378	28,378	
	Օրերի քանակը	4	3	3	4	4	
	Ընդամենը (դրամ)	113,510	85,133	85,133	113,510	113,510	510.796
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար						
	Մուտքի արտոնագրի վճար						-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)						
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		185,548	157,171	157,171	185,548	185,548	870.986

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

01.07.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ___Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 462-ԳՔ,11.06.2025թ**

<< ՀԾԿՀ ֆինանսական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ՝ **Սևակ Բաբայան**
սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**
միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան**
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Թբիլիսի /Վրաստան /**

5. Գործուղման ժամկետները **25.06.2025-28.06.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*<< կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սևակ Բաբայան	Դավիթ Մուրադյան	Զարուհի Ստեփանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	62.456	62.456	62.456	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	24,013	24,013	24,013	
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)հաշիվ հյուրանոցից	72,038	72,038	72,038	216.114
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	74	74	74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,378	28,378	28,378	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	113,510	113,510	113,510	340.530
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)ճանապարհածախս՝ վառելիքի գումար		44,109		44.109
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		185,548	229,657	185,548	600.753

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ս)

Ամսաթիվ

01. 07.2025թ.